



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱԴԵՏԷ
Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Կիրակի, Փետրուար 10-ը, Մեծ Պահոց շրջանի 2-րդ Կիրակին է, եւ կը կոչուի Արտաքսման Կիրակի:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Ս. Պատարագի արարողութեան եւ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը պիտի փոխանցէ:

Հիւրաբար շրջանս կը գտնուի Բերիոյ Թեմի նախկին Առաջնորդ Գերշ. Տ. Սուրեն Արք. Գաթարոյեան: Թեմիս բարեշան Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինումով, հիւր Սրբազան Հայրը պիտի նախագահէ Կլենտելլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ իր պատգամը:

PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY
AT HOLY MARTYRS CHURCH

Sunday, February 10th, is the second Sunday of Great Lent, also known as the Expulsion. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at Holy Martyrs Church in Encino and deliver the sermon.

By the ordinance of the Prelate, former Prelate of the Diocese of Aleppo H.E. Archbishop Suren Kataroyan, who is currently visiting the Prelacy, will deliver the sermon at St. Mary's Church in Glendale.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ 13 ՓԵՏՐՈՒԱՐԻՆ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱԴԵՏԷ
Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐԵՎԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ

Չորեքշաբթի, Փետրուար 13-ին, կ.ա. ժամը 10-ին, Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետէ Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ Արեւագալի ժամերգութեան:

Հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազանին, Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը կազմակերպած է Մեծ Պահքի ճաշկերոյթ, որ տեղի պիտի ունենայ Արեւագալի ժամերգութենէն ետք, եկեղեցւոյ «Կարապետեան» սրահին մէջ:

Օրուան խօսքը պիտի փոխանցէ Հոլիվուտի Ռոզ եւ Ալէք Փիլիպոս Ազգ. Վարժարանի ուսուցչուհի, Տիկին Սօնա Մատարեան: Պիտի ներկայացուի գեղարուեստական կոկիկ յայտագիր, մասնակցութեամբ Վարժարանի աշակերտներուն: Պիտի հրամցուի Պահքի յատուկ ճաշեր:

PRELATE TO PRESIDE OVER SUNRISE SERVICES AND LENTEN LUNCHEON AT ST. GARABED CHURCH

On Wednesday, February 13th, the Prelate will preside over Sunrise Services at St. Garabed Church in Hollywood. The service will begin at 10:00 a.m.

Following the service, the Prelacy Ladies Auxiliary has organized a Lenten luncheon to take place at the adjacent “Karapetian” Hall. During the luncheon, remarks will be delivered by Rose and Alex Pilibos High School teacher Mrs. Sona Madarian, and students will participate in the artistic program.

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ, ԱՒԱՆԴԱԿԱՆ ԽԱՐՈՅՎ ԵՒ ԸՆԹՐԻՔ

Հինգշաբթի, Փետրուար 14-ը մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի տաճար ընծայման տօնն է, Տեառնընդառաջ:

Տօնի նախօրեակին, Չորեքշաբթի, Փետրուար 13-ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ պիտի կատարուի Տեառնընդառաջի նախատօնակ, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր:

Տարիներու աւանդութեան համաձայն, ՀՄԸՄ-ի սկաուտական խմբապետական կազմերը ներկայ պիտի ըլլան արարողութեան: Ներկայ պիտի ըլլան նաեւ մեր եկեղեցւոյ Երիտասարդական Խմբակներու անդամ-անմդամուհիները:

Նախատօնակի արարողութենէն ետք, եկեղեցւոյ շրջափակին մէջ աւանդական խարոյկը պիտի վառուի:

Աւելի ուշ, Առաջնորդ Սրբազանը, ներկայ հոգեւորականները, Ազգ. Վարչութեան, եկեղեցւոյ ծխական մարմիններու, ՀՄԸՄ-ի եւ եկեղեցիներու Երիտասարդականի անդամները «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ պիտի համախմբուին սիրոյ սեղանի շուրջ:

PRELATE TO PRESIDE OVER SERVICES ON THE EVE OF THE FEAST OF THE PRESENTATION OF OUR LORD TO THE TEMPLE

On the evening of Wednesday, February 14th, the eve of the Feast of the Presentation of our Lord to the Temple, the Prelate will preside over services at St. Mary’s Church in Glendale.

In keeping with tradition, Homenetmen scouts will participate in the service along with members of Prelacy youth groups. Following the service the traditional bonfire will take place in the church courtyard.

A reception will follow in the “Armenak Der Bedrossian” Hall with the participation of clergy members, Executive Council, parish committees, and Homenetmen and youth group members.

ՊԵՏԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՁՆԱԴՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԻՐԸՆԿԱԼՈՒԵՑԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Կիրակի, Փետրուար 2-ին, հրաւերով Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, Կրօնական Ժողովի եւ Ազգային Վարչութեան, ու համատեղ գործակցութեամբ Ազգ. Առաջնորդարանի Առաքելութեան Տարածման ու Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբերուն, յատուկ ընդունելութիւն մը տեղի ունեցաւ Ազգային Առաջնորդարանի համալիրին մէջ, ի պատիւ դաշնակցային ու Զաւիճորնիոյ խորհրդարաններուն, ինչպէս նաեւ հայաշատ կարգ մը աւաններու քաղաքապետութեանց անդամներու, ծանօթանալու համար այս յարկին ու անոր հովանիին տակ տարուող աշխատանքներուն:



Ներկայ էին Հայաստանի հանրապետութեան Լոս Անճելըսի փոխ-գլխաւոր հիւպատոս Տիար Մեսրոպ Շապոյեան, դաշնակցային խորհրդարանի անդամ Էտըմ Շիֆ, Զաւիճորնիոյ խորհրդարանի անդամներն Տեարք Մայք Ֆիւրը, Էնթընի Փորթանթիւս, Փօլ Գրիգորեան, Լոս Անճելըսի քաղաքապետական խորհուրդի նախագահ Էրիք Կարստեթի եւ անդամ Տենիս Չայն,

Նախկին խորհրդարանական Տիկին Քարոլ Լու, Կլենտէյլի քաղաքապետ Տիար Արա Նաճարեան, Կլենտէյլի շրջանի դպրոցական համակարգի խորհուրդի անդամ Նայրի Նահապետեան, Կլենտէյլի հանրային Զուլէճի խորհուրդի նախագահ Դոկտ. Արմինէ Յակոբեան եւ խորհուրդի անդամ Դոկտ. Վահէ Փիրումեան, ինչպէս նաեւ խորհրդարանական Պրետ Շըրմընի, Ճէք Սքաթի, քաղաքապետութեան անդամ Ուենտի Կրուէլի եւ Լոս Անճելըս գաւառի 5րդ շրջանի վերակացու Մայքըլ Անթոնովիչի ներկայացուցիչները:

Մեր Թեմի ժողովականութենէն ու կազմակերպութիւններէն ներկայ էին Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիգրանեան, Կրօնական Ժողովի, Ազգ. Վարչութեան ու Ազգ. Երեսփոխանական Ժողովի անդամներ, Զ.Յ.Դ. Կեդր. Կոմիտէի անդամ Տիար Գարեգին Խանճեան, Հայ Դատի Ուաշինկթընի յանձնախումբի ատենապետ Զէն Խաչիկեան ու Արեւմտեան Միացեալ Նահանգներու յանձնախումբի ատենապետ Րաֆֆի

Համբարեան, Յ.Մ.Ը.Մի եւ ՀՕՄի Կեդրոնական ու Շրջանային Վարչութեանց, Համազգայինի Շրջ. Վարչութեան, Թեմիս Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինի, եկեղեցիներու հոգաբարձութեանց ներկայացուցիչները, Ազգային Առաջնորդարանի բարերարներ ու բարեկամներ:

Առաջնորդարանի բաժանմունքներուն ծանօթանալէ ետք, հիւրերը համախմբուեցան «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, ուր արտասանուեցան սրտի խօսքեր, կատարուեցաւ յուշանուէրներու փոխանակում:

Հանդիսավարն էր Ազգ. Առաջնորդարանի Առաքելութեան ու Հայ Դատի յանձնախումբերու անդամներէն Տիկ. Փաթիլ Աբոշեան-Գասպարեան: Ան առաջին հերթին ողջունեց պաշտօնական անձնաւորութիւններն ու հիւրերը եւ ապա, բեմ հրաւիրեց Առաջնորդ Սրբազան Հայրը արտասանելու իր սրտի խօսքը: Առաջնորդ Սրբազանը գոհունակութիւն արտայայտեց, որ պետական անձնաւորութիւնները ընդառաջած են հրաւերին ու նշեց Ազգ. Առաջնորդարանի բազմաճիւղ աշխատանքները, շեշտելով, որ այս հաստատութիւնը նոր հորիզոններ կը բանայ ժողովրդանուէր ու սերնդակերտ գործի դիմաց: Ան նշեց որ այս հանդիպումը նոյն յարկին տակ կը համախմբէ հայութեան բարեկամներն ու հայկական կազմակերպութեանց ներկայացուցիչները, որոնց միջեւ գործակցութիւնը պիտի շարունակուի նաեւ ապագային:

Յաջորդաբար խօսք առին Էտըմ Շիֆ, Էրիք Կարսեթի, Փօլ Գրիգորեան, Էնթընի Փորթանթիսօ, Տենիս Չայն, Արա Նաճարեան: Խօսք առին նաեւ Մայքըլ Անթոնովիչի եւ Պրետ Շըրմընի ներկայացուցիչները. հիւրերը եւ Առաջնորդ Սրբազանը յուշանուէրներ փոխանակեցին:

Յայտնենք նաեւ, որ Առաջնորդ Սրբազանին յանձնուեցաւ Զալիֆորնիոյ նահանգապետ Առնոլտ Շուարցընեկըրի շնորհաւորական նամակը:

Սրտի խօսքերու աւարտին, ներկաները նախաճաշով հիւրասիրուեցան Տ. Օ. Մարմինին կողմէ եւ ունեցան մտերմիկ զրոյց:

RECEPTION FOR ELECTED OFFICIALS HOSTED BY THE WESTERN PRELACY

On the morning of Saturday, February 2nd, an open house and reception for Southern California elected officials took place under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, at the Western Prelacy headquarters. The event was organized by the Western Prelacy Outreach Committee and the Armenian National Committee Western Region to familiarize the officials with the endeavors and mission of the Prelacy.

Among those in attendance were Consul of the Republic of Armenia Mesrob Shaboyan, Congressman Adam Schiff, Assembly members Mike Feuer, Anthony Portantino, and Paul Krekorian, Los Angeles City Council President Eric Garcetti, Councilmember Dennis Zine, former State Assembly member Carol Liu, Glendale Mayor Ara Najarian, Glendale Unified School District board

member Mrs. Nairi Nahapetian, Glendale College Board of Trustees members Dr. Armine Hacopian and Dr. Vahe Peroomian, and representatives from the offices of Congressman Brad Sherman, State Senator Jack Scott, Councilmember Wendy Greuel, and Los Angeles County Supervisor Mike Antonovich.

Also in attendance were Central Executive Council member Mr. Khajag Dikijian, Religious and Executive Council members, Representatives Assembly Delegates, A.R.F. Central Committee member Mr. Karekin Khanjian, ANC National Board Chairman Mr. Ken Hachikian, ANC Western Region Board Chairman Mr. Raffi Hamparian and board members, members of Homenetmen, A.R.S., Hamazkayin, Board of Regents, Boards of Trustees members, and benefactors.

Following a tour of the headquarters, guests gathered in the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall where the official program commenced with welcoming remarks by Prelacy Outreach Committee member and ANC-WR Board member, Mrs. Patty Aposhian-Kasparian. Mrs. Kasparian highlighted the activities that are carried out at the Prelacy and, after acknowledging the officials and guests in attendance, invited the Prelate to offer his remarks.



The Prelate began by thanking the officials for accepting the invitation to assemble under one roof and to become more closely acquainted with the endeavors and mission of the Prelacy. The Prelate noted that this reception brings together friends of the Armenian people with our community members, expressing hope that this collaboration continues in the future.

Remarks were subsequently offered by Congressman Adam Schiff, City Council President Eric Garcetti, Assembly members Paul Krekorian and Anthony Portantino, Councilmember Dennis Zine, Mayor Ara Najarian, and representatives from the offices of Supervisor Michael Antonovich and Congressman Brad Sherman, all of whom congratulated the Prelate on the realization of the new headquarters and offered their well wishes. The officials presented the Prelate with congratulatory resolutions from their respective offices and in turn the Prelate presented each of the officials or their representatives with mementos. Governor Arnold Schwarzenegger, who could not attend the reception, had sent a congratulatory letter which was also presented to the Prelate.

Guests then had the opportunity to interact with the officials and with each other during breakfast which was hosted by the Ladies Auxiliary.

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆՂԱՆԻ ԽՐԱՆՃԱՆԱԿԱՆ ՏՈՅՄԻԿ ՁԵՌՆԱՐԿ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՅԱՐԿԻՆ ՏԱԿ

Բուն Բարեկենդանի տօնին առիթով, Կիրակի, Փետրուար 3-ին, կ.ե. ժամը 1:30-ին, ընտանեկան տոհմիկ խրախճանք մը տեղի ունեցաւ Կլենտլի «Արմենակ Տեր Պետրոսեան» սրահին մէջ:

Ձեռնարկը կը վայելէր Առաջնորդ Սրբազան Զօր հովանաւորութիւնն ու ներկայութիւնը, եւ նախաձեռնութիւնն էր Ազգային Առաջնորդարանի Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմինին եւ Ծնողական յանձնախումբին: Մասնակից եղան աւելի քան 400 հանդիսականներ:

Օրուան պատգամաբերն էր Ազգ. Ալեք Փիլիպոս վարժարանի դաստիարակ ուսուցչուհի՝ Սօնա Մատարեանը, անմիջական ու կենդանի հաղորդականութեամբ փոխանցեց Բարեկենդանի տօնին իմաստը, նշելով բարեկենդանական տօնին առնչուած ժողովրդային տօնախմբութիւններն ու ազգային տոհմիկ սովորութիւնները:

Գեղարուեստական յայտագրին մասնակցեցաւ բանաստեղծ ժագ Ս. Յակոբեան որ հանդէս եկաւ բարեկենդանական խոհերով եւ Վարդանանց հաւատամարտին նուիրուած բանաստեղծական հատուածներու ընթերցումներով: Մեր եկեղեցիներու կիրակնօրեայ դպրոցներու աշակերտներ ելոյթ ունեցան սաղմոսներով ու աղօթքներով, Բարեկենդանական երգերով, արտասանութիւններով, խմբերգներով եւ ներկայացումով:

Այնուհետեւ, բեմ հրաւիրուեցաւ Առաջնորդ Սրբազանը, որպէսզի ուղղէ իր պատգամը:

Սրբազանը նախ գնահատեց Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական

Դաստիարակութեան Գրասենեակի ու անոր Վարիչներուն տարած աշխատանքները, Վարիչ Մարմինի ատենապետ Տիար Յակոբ Զաղացպանեանը, ծնողական յանձնախումբը եւ հիւրընկալ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւներն ու հոգաբարձուները, ինչպէս նաեւ բոլոր եկեղեցիներու հոգաբարձական կազմերը, որոնք ամէն առթիւ նիւթապէս եւ բարոյապէս զօրավիզ կը կանգնին կիրակնօրեայ դպրոցներու ծրագիրներուն եւ աշխատանքներուն:



Ապա, Առաջնորդ Սրբազանը վեր առաւ Բարեկենդանի հոգեւոր իմաստը, շեշտելով մարդուն մէջ աստուածային պատկերին անաղարտ պահպանութիւնը:

Եզրափակելով իր խօսքը, Առաջնորդ Սրբազանը մաղթեց, որ յառաջիկայ շաբաթներուն պահեցողութեան դիմող հաւատացեալներուն ուխտը ընդունելի ըլլայ Աստուծոյ մօտ:

CELEBRATION OF PAREGENTAN

On Sunday, February 3rd, a family celebration of Paregentan took place at the “Armenak Der Bedrossian” Hall of St. Mary’s Church with over 400 guests in attendance. The celebration was held under the auspices of the Prelate and was organized by the Prelacy Sunday Schools’ directorate and Parent committee.

The keynote speaker was Rose and Alex Pilibos School teacher Mrs. Sona Madarian who spoke of the meaning of Paregentan and the traditions associated with the feast.

Among the participants in the artistic program were poet Jacques Hagopian who recited passages of poetry inspired by the Feast of Vartanants, and Sunday School students who performed songs and recitations.

In his closing remarks the Prelate commended the efforts of all the committees who faithfully support the endeavors of our Sunday Schools and contribute to their advancement, among them the Christian Education Department, Sunday Schools’ directorate Chair Mr. Hagop Tchagasspanian and members, Parent Committee members, Pastors, and Boards of Trustees.